

ՄԱՄԻԿՈՆՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԱԿԱՆ ՏԱՆ ՏԻՐՈՒՅԹՆԵՐԸ

Բանալի բառեր – Մամիկոնյաններ, Մամգուն, Փավստոս Բուզանդ, Արշակունիներ, Մահակ Պարթև, Տրդատ Գ, Տարոն, Տայք, Բագրևանդ, Մասուն, արքայատոհմ, գավառ, ապստամբություն, նախարարներ

Մամիկոնյան իշխանական ընտանիքը, որը դարձավ վաղ միջնադարյան Հայաստանի ամենանշանավոր տոհմերից մեկը, ըստ Մովսես Խորենացու տեղեկությունների, Մեծ Հայքում է 240-ական թվականներից, մասնավորապես Շապուհ I-ի (243-273) կառավարման սկզբնական շրջանում, երբ պարսից արքան ապագա Մամիկոնյան տոհմի նահապետին «ամենայն աղխին իւրով առաքէ զնա իբրև զվտարանդի առ գործակալս իւր որ է Հայս»¹: Գալով Հայաստան՝ տոհմի նահապետ Մամգունը (Մամգոն) հանդիպում է Տրդատ Բ-ին (216-256)²: Վերջինս ընդունում է նրան, քանի որ Պարսկաստանի դեմ առաջիկա պատերազմներում իրեն հարկավոր էին դաշնակիցներ. նրանց հատկացնում է բնակության որոշակի վայր, բայց դա Տարոնը կամ Տայքը չէր: Առաջին խոշոր տիրույթները, ինչպես կտեսնենք, Մամիկոնյանները ստացան ավելի ուշ: Նախ նշենք, որ ժամանակի ընթացքում թե՛ Արշակունի թագավորներին մատուցած ծառայությունների դիմաց, թե՛ խնամիական կապերի շնորհիվ և թե՛ այլ հանգամանքներում Մամիկոնյան տոհմի իշխանները դարձան Հայաստանի խոշորագույն հողատերերը, և այդ ճանապարհին առաջինը Տուրուբերան նահանգի Տարոն գավառն էր³: Նրանք վերջինս ստացան ոչ թե անմիջապես Հայաստան գաղթի ժամանակ, այլ ավելի ուշ՝

¹ **Մովսես Խորենացի**, Պատմութիւն Հայոց, քննական բնագիրը և ներածութիւն Մ. Աբեղեանի եւ Ս. Յարութիւնեանի (այսուհետև՝ **Մովսես Խորենացի**), Երևան, 1991, էջ 222:

² Տե՛ս նույն տեղում, էջ 223: Ս. Կոզյանը, քննելով Կամսարականների գաղթը դեպի Հայաստան, նշում է, որ Մամիկոնյանները Հայաստան են գաղթել Պարթև Արշակունիների անկումից հետո: Տե՛ս **Կոզեան Ս.**, Կամսարականները «Տեարք Շիրակայ և Արշարունեաց», Վիեննա, 1926, էջ 13-14:

³ Տարոն գավառի աշխարհագրական դիրքի և սահմանների մասին տե՛ս **Սարգիսեան Ն.**, Տեղագրութիւնք ի Փոքր եւ Մեծ Հայս, Վենետիկ, 1864, էջ 225-237, **Հիւրջման Հ.**, Հին հայոց տեղւոյ անունները, թագմանեց Հ. Բ. Պիլեգիկճեան, Վիեննա, 1907, էջ 189-192, **Адоиц Н.**, Армения в эпоху Юстиниана, Ереван, 1971, с. 308-312, **Երեմյան Ս.**, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 1963, էջ 85, **Հակոբյան Թ.**, Հայաստանի պատմական աշխարհագրություն (ուրվագծեր), Երևան, 1968, էջ 165-168, **Գրիգորյան Գ.**, Տարոնի Բագրատունիների ֆեոդալական իշխանությունը IX-X դարերում, Երևան, 1983, էջ 19-29, **Հարությունյան Բ.**, Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 2001, էջ 225-228 և այլք:

Տրդատ Գ-ի (298-330) կառավարման օրոք, երբ Սլկունի նախարարներն ապստամբել էին թագավորական իշխանության դեմ: Տրդատը, զբաղված լինելով պատերազմական գործողություններով, հրաման արձակեց. «Որ ոք ածցել առ իւ գնահապետն ազգին Սլկանեաց՝ տաց մնա յաիտենական իշխանութեամբ զգեօսս և զդաստակերտս, և զամենայն իշխանութիւն ազգին Սլկանեաց»¹: Թագավորի հրամանի կատարումը հանձն է առնում Մամգունը²: Վերջինս բնաջնջում է Սլկունիների տոհմը, և թագավորը, ինչպես խոստացել էր, Տարոնի արևելյան Սլկունիներին պատկանող կալվածքները նվիրաբերում է Մամիկոնյաններին. «Գրէ հրովարտակ՝ իշխել նմա ամենայնի զոր խոստացան և կարգէ զնա նախարար ի տեղի ապստամբին, անուանելով յանուն իւր Մամգունեան»³: Նշենք, որ Տարոնում կալվածքներ ունեին կաթողիկոսական տունը և Արշակունի թագավորները⁴: Թագավորա-

¹ **Մովսես Խորենացի**, էջ 228:

² Պատմիչի հիշատակած Մամգունը չէր կարող զնալ Տարոն այն պարզ պատճառով, որ Տրդատ Բ-ին հանդիպելու ժամանակ 25-30 տարեկան էր, ապա՝ Սլկունիներին հնազանդեցնելու ժամանակ նա կարող էր առնվազն 100 և ավելի տարեկան լինել, քանի որ ըստ Մովսես Խորենացու՝ Սլկունյաց նահապետը հրապուրված է եղել պարսից արքայի խոստումներով (տե՛ս **Մովսես Խորենացի**, էջ 227), իսկ Շապուհ Բ-ն, ինչպես գիտենք, գահ է բարձրացել 309 թ.՝ մանուկ հասակում, և չէր կարող հյուսիսային ցեղերին և Սլկունյաց նահապետին զրգռել Տրդատի դեմ: Պարզ հաշվարկներով դա կատարվել է 320-ական թվականների վերջերին: Այդ դեպքում էլ Մամգունը չէր կարող սպանել Սլկունյաց նահապետին, քանի որ այդ ժամանակ կենդանի չէր կարող լինել, և Պատմահայրն ակնհայտորեն շփոթում է այն վերագրելով Մամգունին: Սլկունյաց իշխանական տոհմը բնաջնջել է կա՛մ սպարապետ Վաչե Մամիկոնյանը, կա՛մ նրա հայր Արտավազդը: Վերջինս եղել է Տրդատ Գ-ի սպարապետը: Ճիշտ է, Մովսես Խորենացին նրան հիշատակում է որպես Մանդակունի (տե՛ս **Մովսես Խորենացի**, էջ 231), սակայն դա հետագա դարերում արտագրողների կողմից կատարված ընդմիջարկություն է, որտեղ Մամիկոնյանը դարձել է Մանդակունի: Ազաթանգեղոսի Պատմության հունական խմբագրությունում մի քանի անգամ հիշատակվում է այն մասին, որ Տրդատի Գ-ի օրոք Մամիկոնյաններն էին սպարապետները (տե՛ս Ազաթանգեղոսի Պատմության հունական նորահայտ խմբագրությունը (Վարք), թարգմանություն հունարեն բնագրից՝ Հ. Բարթիկյանի, առաջաբան և ծանոթագրություններ՝ Ա. Տեր-Ղևոնդյանի // **Բարթիկյան Հ.**, Հայ-բյուզանդական հետազոտություններ, հ. առաջին, Երևան, 2002, էջ 172, 174, 178): Ազաթանգեղոսի արաբերեն խմբագրությունում նշվում է նաև Մամիկոնյան սպարապետի անունը՝ Արտավազդ: Տե՛ս **Տեր-Ղևոնդյան Ա.**, Ազաթանգեղոսի արաբական նոր խմբագրությունը (արաբերեն բնագիր և ուսումնասիրություն), Երևան, 1968, էջ 58): Տրդատ Գ-ի օրոք Արտավազդ Մամիկոնյանի մասին տե՛ս **Մեսրոպ Երեց**, Պատմութիւն, Կ. Պոլիս, 1737, էջ 214-215: Հարցի մանրամասն քննությունը տե՛ս **Աբգարյան Գ.**, Մամիկոնյանների զրույցի հնագույն աղբյուրը հայ մատենագրության մեջ (Բուզանդարանի կորած դպրությունների կապակցությամբ) // «Բանբեր Մատենադարանի», թիվ 7, 1964, էջ 247-249:

³ **Մովսես Խորենացի**, էջ 229: Մամիկոնյանների գաղթի վերաբերյալ տե՛ս «Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դդ.», հ. II, կազմեց Վ. Հակոբյան, Երևան, 1956, էջ 317-318:

⁴ Տե՛ս **Փաւստոսի Բիզանդացոյ**, Պատմութիւն Հայոց, բնագիրը Բ. Պատկանյանի (այսուհետև՝ **Փավստոս Բուզանդ**), Երևան, 1987, էջ 178, 180: Մինչև քրիստոնեության ընդունումը Տարոնի մի մասը, մասնավորապես՝ արևմտյան շրջանները, քրմական դասը ներկայացնող Վահևունիների կալվածքներն էին: Տե՛ս **Մովսես Խորենացի**, էջ 122, 127-128:

կան տիրույթների հսկողությունը դրված էր Հայր մարդպետի վրա: Փավստոս Բուզանդը, նկարագրելով Հայր մարդպետի և Ներսես կաթողիկոսի հանդիպումը Տարոնում, նշում է. «Արդ ելանէր սա շրջէր ընդ մարդպետութիւնս իւր. ապա եկն էջ Հայր Մարդպետ ի գաւառն Տարօնոյ ընդ իւր գեղն տեսանել»¹: 439 թ. Հայոց կաթողիկոս Սահակ Պարթևի մահվանից հետո Տարոնում Գրիգոր Լուսավորչի տան կալվածքները ևս անցան Մամիկոնյաններին², որոնք դրանով դարձան գավառի մեծագույն մասի տիրակալները: Եթե մինչև 428 թ. Տարոնը Մամիկոնյաններին էր պատկանում ձեռական իշխանության իրավունքով³, ապա Արշակունիների անկումով և Սահակ Պարթևի կտակով այն դարձավ ժառանգական սեփականություն: Հովհան Մամիկոնյանը հայտնում է, որ Տարոնի արևմտյան փոքր հատվածը պատկանում էր Պալունիներին. «Յերկիրն Պալունեաց յաւանն Գիսիանէ ի քաղաքագեղն Կուռս»⁴: Սակայն հետագա դարերում, Մամիկոնյանների հզորացմանը զուգահեռ, Պալունիների կալվածքները ժամանակի ընթացքում նույնպես անցան նրանց: Եվս մեկ անգամ շեշտենք, որ Տարոնն առաջին խոշոր կալվածքն էր, որ ձեռք բերեցին Մամիկոնյանները 320-ական թվականներին, և այն հետագայում դարձավ տոհմի հզորացման հիմքը: Ինչպես տեղեկանում ենք սկզբնաղբյուրներից, Տարոնն իր Ողական ամրոցով երկար դարեր եղել է հայոց սպարապետի նստավայրը և առանց ընդմիջումների, մինչև IX դարի սկիզբը, պատկանել Մամիկոնյաններին⁵: 774-775 թթ. համաժողովրդական

¹ Փավստոս Բուզանդ, էջ 178:

² Սահակ Պարթևն արու գավակ չունէր և տոհմական հսկայական կալվածքները կտակեց իր դստերը՝ Սահականուշին: Վերջինս ամուսնացած էր սպարապետ Համագասպ Մամիկոնյանի հետ: Տե՛ս **Ղազարայ Փարպեցոյ**, Պատմութիւն Հայոց եւ թուրք առ Վահան Մամիկոնեան, Քննական բնագիրը Գ., Տեր-Մկրտչյանի և Ստ. Մալխասյանցի (այսուհետև՝ **Ղազար Փարպեցի**), Երևան, 1982, էջ 84:

³ Տե՛ս **Հարությունյան Բ.**, նշվ. աշխ., էջ 227: Ս. Երեմյանը Տարոնը համարում է Մամիկոնյանների «ձեռական» իշխանություն (տե՛ս **Երեմյան Ս.**, Պայմանական հողատիրության առաջացման հարցի շուրջը ֆեոդալականացող Հայաստանում. «Ձեռական իշխանությունը» հին Հայաստանում // «Պատմա-բանասիրական հանդես» (այսուհետև՝ «ՊԲՀ»), 1971, թիվ 1, էջ 8:

⁴ **Յովհան Մամիկոնեան**, Պատմութիւն Տարօնոյ, աշխատությամբ և առաջաբանով Աջ. Աբրահամյանի (այսուհետև՝ **Յովհան Մամիկոնեան**), Երևան, 1941, էջ 79: Պալունիները որպես նախարարական տոհմ հիշատակվում են նաև Գահնամակում (տե՛ս **Ալոսի Հ.**, նշվ. աշխ., էջ 250, 257, 261): Նրանք իրենց գործունեությունը շարունակեցին նաև V դարում: Եղիշեն մարզպան Վասակի կողմնակիցների շարքում հիշատակում է. «Բշխանն մեւս ևս Պալունեաց՝ Վարազշապուհ անուն» (տե՛ս Եղիշէի Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, Ի լոյս ածեալ բաղդատութեամբ ձեռագրաց աշխատութեամբ Ե. Տեր Մինասեան, Երևան, 1957, էջ 92): Իսկ Վարդան սպարապետի կողմնակիցներից էր Պալունյաց Արտակ իշխանը (տե՛ս նույն տեղում, էջ 119):

⁵ Աշոտ Մսակեր Բագրատունին Տարոնին տիրել է IX դարի սկզբներին, մասնավորապես՝ 806 թ., այն է՝ հայոց իշխան հռչակվելուց հետո՝ մինչև 810 թ. ընկած ժամանակահատվածը: Տե՛ս **Վարդանյան Ա.**, Տարոն գավառի պատկանելիության հարցի շուրջ (VIII դ. երկրորդ կես-IX դ. սկիզբ) // «Հայոց պատմության հարցեր», թիվ 17, Երևան 2016, էջ 50:

ապստամբության պարտությունից հետո, երբ գոհվեցին Մամիկոնյան տոհմի ներկայացուցիչներ Մուշեղը և Մամուելը, Մամիկոնյանները սկսեցին ժամանակավորապես նվազ դեր խաղալ Հայաստանի քաղաքական կյանքում¹ և աստիճանաբար կորցրին իրենց կալվածքների զգալի մասը, այդ թվում՝ նաև Տարնը:

Հաջորդ խոշոր հողատիրույթը, որ ձեռք են բերել Մամիկոնյանները Հայաստանում, Տայքն է: Չանդրադառնալով վերջինիս աշխարհագրական նկարագրությանը², փորձենք պարզել, թե գավառը երբ է անցել նրանց: Խնդրո առարկա հարցի վերաբերյալ ուսումնասիրողների տեսակետները բաժանվում են: Մ. Թումանյանը նշում է, որ Մամիկոնյանները Հայաստան են եկել I դարում՝ հաստատվելով Տայք նահանգում³: Այս տեսակետն անհիմն է այն պարզ պատճառով, որ, ինչպես վերը նշեցինք, Մովսես Խորենացին հստակորեն փաստում է, որ Մամիկոնյանների նախնիները Հայաստան են գաղթել Տրդատ Բ-ի օրոք, մասնավորապես՝ III դարի առաջին կեսին: Ն. Ադոնցը, չմանրամասնելով Տայքում Մամիկոնյանների հաստատվելու ժամանակը, նշում է. «Մամիկոնյանները Չինաստանից եկան հաստատվեցին Տայքում՝ իրենց տոհմական կալվածքում»⁴: Ուսումնասիրողների գերակշիռ մասը խնդրո առարկա հարցին անդրադառնալիս նշում է IV դարը, սակայն չի մանրամասնում մոտավոր թվականը: Լեոն նշում է, որ IV դարում Տայքը պատկանում էր Մամիկոնյաններին⁵: Թ. Հակոբյանը հետևում է նրա տեսակետին⁶: Մ. Կատվայանն առանց հաշվի առնելու Մովսես Խորենացու հարդորումները Մամիկոնյանների գաղթի վերաբերյալ նշում է. «230-ական թթ. Հայոց թագավոր Խոսրով Ա Մեծը (Տրդատ Բ-ն – Վ. Ա.) Տայքի մեծագույն մասը հատկացրել է Մամիկոնյանների նախարարությանը՝ որպես ժառանգական կալվածք»⁷: Ա. Եղիազարյանը, քննարկելով Տայքն ըստ «Աշխարհացոյց»-

¹ Տարն-Սասունում X դարի կեսերից նորից աստիճանաբար սկսեցին ակտիվանալ Մամիկոնյանների ժառանգները: Ժամանակի ընթացքում Մամիկոնյան-Թոռնիկյան իշխանությունն այնքան հզորացավ, որ XI դարի երկրորդ կեսին և հաջորդ դարի առաջին տասնամյակներին հայկական լեռնաշխարհի ամենահզոր հայկական իշխանությունն էր: Տե՛ս Վարդանյան Ա., Մամիկոնյան իշխանական ընտանիքը Բագրևանդում և Տարն-Սասունում IX-XII դդ. // «Բանբեր Երևանի համալսարանի. Հայագիտություն» (այսուհետև՝ «ԲԵՀ»), 2017, թիվ 2, էջ 3-16:

² Տայքի աշխարհագրական դիրքին և սահմաններին անդրադարձել են բազմաթիվ հեղինակներ, սակայն վերջին ամփոփիչ քննությունը տե՛ս Եղիազարյան Ա., Մեծ Հայքի Տայք աշխարհն ըստ «Աշխարհացոյց»-ի // «ՎԷՄ», 2014, թիվ 2, էջ 35-59:

³ Տե՛ս Թումանեան Մ., Մի քանի նկատողություն Մամիկոնեանց գաղթականութեան մասին // «Հանդես ամսօրեայ», 1911, թիւ 9, էջ 528:

⁴ Адонц Н., նշվ. աշխ., էջ 403: Եթե Մամիկոնյանները գաղթել են Չինաստանից, ապա ինչպե՞ս է Տայքը նրանց տոհմական կալվածքը, այդ մասին Ն. Ադոնցը չի մանրամասնում:

⁵ Տե՛ս Լեոն, Երկերի ժողովածու, հ. Ա, Երևան, 1966, էջ 162:

⁶ Տե՛ս Հակոբյան Թ., նշվ. աշխ., էջ 261:

⁷ Կատվայան Մ., Տայք // Հայկական սովետական հանրագիտարան, հ. 11, Երևան, 1985, էջ 560:

ի, նշում է, որ Մամիկոնյանները Տայքին ամբողջությամբ տիրել են V դարի 30-ական թվականներին, Արսյաց գավառն իրենց մյուս տարածքներին միացնելու հետևանքով¹: Շ. Դավթյանը, անդրադառնալով հիշյալ հարցին, սկզբնական շրջանում հանգում է ճիշտ եզրակացության, որ Մամիկոնյանները Տիրանի թագավորության շրջանում Տայքի ամրոցների տերերն էին²: Մակայն փոքր անց նա ավելացնում է, որ Մամիկոնյանները Տայքում հայտնվել են IV դարի երկրորդ կեսին և հայոց թագավորության վերացումից հետո գավառի տեր են համարվել: Այդուհանդերձ, Շ. Դավթյանը և մյուս հեղինակները հաշվի չեն առնում Փավստոս Բուզանդի այն հաղորդումը, ըստ որի՝ երբ սպարապետ Վասակ Մամիկոնյանն արքունական խարդավանքների հետևանքով գնում էր սպանելու իր եղբորը՝ Մամիկոնյան տոհմի տանուտեր Վարդանին, վերջինս գտնվում էր Տայքում. «Յիւր ամուր բերդին՝ որում անուն էրախանի կոչի»³: Այս դեպքը կատարվել է 350-ական թվականների սկզբներին, և փաստ է, որ այդ ժամանակ Տայքի մեծագույն մասը՝ Էրախանի ամրոցով հանդերձ, Մամիկոնյանների ավագ ճյուղի սեփականությունն էր: Մեկ այլ պարագայում, ավելի վաղ կատարված իրադարձությունները ներկայացնելիս, Փավստոս Բուզանդը փաստում է, որ Տայքի ամրոցները պատկանում էին Մամիկոնյաններին: Հայոց թագավոր Տիրան Արշակունին (338-346), տեսնելով, թե որոշ նախարարական տներ և բարձրաստիճան եկեղեցականներ ուժեղ պետություն ունենալու ճանապարհին ինչ վտանգ են ներկայացնում, կոտորել տվեց դրանց մի հատվածին, այդ թվում՝ Արծրունի և Ռշտունի նախարարական տոհմերը: Շնորհիվ Արտավազդ Մամիկոնյանի և նրա որդի Վասակի՝ այդ սպանողից փրկվեցին երկու տոհմերի մանուկները: Մամիկոնյանները հեռացան «յաշխարհն իւրեանց յամուրս Տայոց. և անդ նստան ամս բազումս ընտանեօք իւրեանց. և թողին զայլ գտուն իւրեանց»⁴: Այս մեջբերումը ցույց է տալիս, որ 330-ական թվականների վերջերին Տայքի մեծագույն մասը Մամիկոնյանների սեփական կալվածքն էր, այլ ոչ թե արքունի բերդեր էին⁵: Նրանք չէին կարող փախչելով թագավորից ապաստանել արքունի բերդերում: Վերը նշված քննությունը ցույց է տալիս, որ Տայքի մեծ մասը, հատկապես հյուսիսային ամբողջ տարածաշրջանները՝ Էրախանի ամրոցով, IV դարի 30-ական թվականներին արդեն պատկանում էին Մամիկոնյաններին: Հավանաբար նրանք դրանք ստացել էին Խոսրով Կոտակից (330-338) կամ գուցե նրա հայր Տրդատ Գ-ից: Վերջիններս առավել քան բարեհաճ վերաբերմունք ունեին թե՛ եկեղեցականների, թե՛ Մամիկոնյանների և ընդանրապես հռոմեական կողմնորոշում ունեցող-

¹ Եղիազարյան Ա., նշվ. աշխ., էջ 59:

² Դավթյան Շ., Մամիկոնյաններ. առասպել և իրականություն, Երևան, 2015, էջ 260-261:

³ Փավստոս Բուզանդ, էջ 200:

⁴ Տե՛ս նույն տեղում:

⁵ Տե՛ս Դավթյան Շ., նշվ. աշխ., էջ 261:

ների նկատմամբ: Ոչ մի դեպքում Տայքը նրանց չէր կարող անցնել հետագա գահակալների ժամանակ, քանի որ Տիրանը, Արշակ Բ-ն և առավել ևս նրա որդի Պապը (369-374), ոչ մի միջոցի առաջ կանգ չառնելով, փորձում էին նվազեցնել եկեղեցու և նախարարների դերը պետության կառավարման գործում: Արշակունյաց թագավորության կործանումից հետո Տայքը հետագա դարերում դարձավ հայ ազատագրական պայքարի միջնաբերդերից մեկը: Թե՛ Մամիկոնյան իշխանների և թե՛ մյուս նախարարների ղեկավարությամբ տարբեր ժամանակներում այստեղ են ապաստանել թշնամու գերակշիռ ուժերից նահանջող հայկական զորամասերը, քանի որ Տայքն իր անմատչելի լեռներով ու բերդերով բնական դաշնակից էր հայ ապստամբների համար: 450-451 թթ. համաժողովրդական ապստամբությունից հետո Տայքում ապաստանեցին Ավարայրի դաշտից նահանջող հայկական զորամասերը՝ Հնայակ Մամիկոնյանի գլխավորությամբ¹: Ժամանակավոր անհաջողությունից հետո Տայք էր նահանջել նաև V դարի երկրորդ կեսին ապստամբությունը գլխավորող Վահան Մամիկոնյանը²: Արաբական տիրապետության շրջանում Տայքում իրենց պայքարը շարունակեցին նաև 703 թ. Վարդանակերտի ճակատամարտի հաղթողները³: Այն ապստամբական ուժերի կենտրոնակայան դարձավ նաև 749 թ., երբ այնտեղ էր ամրացել Գրիգոր Մամիկոնյանն իր կողմնակիցներով⁴, հակաարաբական պայքարի հետևանքով: Մինչև IX դարի առաջին տասնամյակը Տայքը եղել է Մամիկոնյանների ոստանը, ապա հայտնի դեպքերով պայմանավորված, երբ 786 թ. դավաճան Մերուժան Արծրունու ձեռքով սպանվեցին զորավար Մուշեղ Մամիկոնյանի որդիները, և դրանից մոտ մեկ տասնամյակ անց, երբ Աշոտ Բագրատունին նշանակվեց հայոց իշխան և կարողացավ իր տիրություններին միացնել Մամիկոնյանների մի շարք գավառներ, այդ թվում՝ Տայքի մեծ մասը⁵:

Հերթական տիրությունները, որ ձեռք բերեցին Մամիկոնյանները, նույնպես IV դարի 30-ական թվականների սկզբին էր, երբ մագքունների թագավոր Սանեսան արշավեց Հայաստան: Չխորանալով արշավանքի մանրամասների մեջ, քանի որ բազմիցս մասնագիտական գրականության մեջ անդրադարձ է եղել դրան⁶, նշենք միայն, որ 332 թ. Ցլու գլուխ կոչվող լեռան մոտ և

¹ Տե՛ս **Ղազար Փարպեցի**, էջ 174:

² Նույն տեղում, էջ 328, 352:

³ Տե՛ս Պատմություն Ղետնդեայ մեծի վարդապետի հայոց (այսուհետև՝ **Ղետնդ**), Ս. Պետերբուրգ, 1887, էջ 26:

⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 123-124:

⁵ Տե՛ս Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի լուսաբանեալ (այսուհետև՝ **Վարդան վարդապետ**), Վենետիկ, 1862, էջ 76: Հմմտ. **Հարությունյան Բ.**, Արծրունյաց իշխանական ընտանիքը հայոց պատմության մեջ, Երևան, 2016, էջ 123-124:

⁶ Մագքունների արշավանքի մասին տե՛ս **Հարությունյան Բ.**, Մագքբաց Սանեսան թագավորի արշավանքը Հայաստան // «Լրաբեր հասարակական գիտությունների» (այսուհետև՝ «ԼՀԳ»), 1981, թիվ 6, էջ 65-77:

ապա Օշականի Առապար վայրում հայկական բանակը ջախջախիչ հաղթանակ տարավ մագքուրների նկատմամբ: Ճակատամարտում սպանվեց նաև Սանեսան թագավորը¹: Բնական է, որ Խոսրով Կոտակը պետք է պարզևատրեր ավարառու մասքուրներին հաղթող զորահրամանատարներին՝ արաջին հերթին հայոց բանակի սպարապետ Վաչե Մամիկոնյանին: Ինչպես հաղորդում է Փավստոս Բուզանդը, «եւ ետ Վաչէի զօրավարի զականս Ջանջանակին և զՋրաբաշխիս և զՅլու գլուխ, ամենայն գաւառակօքն հանդերձ»²: Վերը նշված տարածքները Տարոնից և Տայքից հետո երրորդն էին, որոնք Մամիկոնյանները ստանում էին Հայոց թագավորից:

Թ. Հակոբյանը նշում է, որ Ջրաբաշխը Հայկական Պարի շարունակությունը կազմող Սուկավետի գագաթի շրջանում է³: Ըստ Ն. Ադունցի՝ «Ջրաբաշխ = Բագրևանդի Սուկավետ լեռներին»⁴, այսինքն՝ Վաչե Մամիկոնյանի ստացած Ջրաբաշխ կալվածքը գտնվում էր Բագրևանդի մոտակայքում: Սակայն չենք կարող համաձայնել այս պնդումների հետ, քանի որ Յլու գլուխ լեռը գտնվում է Արագածոտն գավառում՝ Վաղարշապատի հյուսիսային մասում⁵, իսկ Ջանջանակը և Ջրաբաշխը շրջակա բնակավայրերով հարակից են այդ լեռանը⁶: Ա. Մանուչարյանը նշում է, որ պատմիչի հիշատակած գավառները գտնվում էին Արագածոտնի հյուսիսում՝ Արագածից հարավ, և Ջանջանակը ու Ջրաբաշխը ենթադրաբար տեղադրում է Շիրակ ու Նիգ գավառների արանքում, որտեղից սկիզբ են առնում այդ գետակները⁷: Դրանք Արագածոտնի հյուսիսում էին գտնվում, թե հարավում, այլ հարց է, բայց, այնուամենայնիվ, այնտեղ Մամիկոնյանների առաջին կալվածքներն էին: Հետագայում, ինչպես կտեսնենք, նրանք այդ գավառում այլ հողերի ևս տիրացան:

Հաջորդ խոշոր կալվածքները Մամիկոնյանները ստացան արդեն V դարում: Ինչպես գիտենք, քրիստոնեության ընդունումից հետո Տրդատ Գ-ն Գրիգոր Լուսավորչին Հայաստանի տարբեր մասերում շնորհեց 15 գավառ: Այդ մասին Փավստոս Բուզանդը նշում է. «Ձի հնգետասն գաւառ զայն ձեռական իշխանութեան ունէին իբրև սեպական ի բնմէ, առանձին առոշոզի նոցա էր կարգեալ: Եւ յայն գաւառ զլխաւոր գաւառք այս էին՝ Այրարատ, Դարանակ,

¹ Տե՛ս Փավստոս Բուզանդ, էջ 30:

² Նույն տեղում, էջ 32:

³ Տե՛ս Հակոբյան Թ., նշվ. աշխ., էջ 21, 22:

⁴ Աժոսի Ի., նշվ. աշխ., էջ 311, ծան. 1:

⁵ Տե՛ս Հիւրշման Հ., նշվ. աշխ., էջ 260: Մ. Աբեղյանը Յլու գլուխը տեղադրում է Տարոնում՝ նշելով. «Յլու գլուխ, որ թագավորը բաշխում է Վաչեին..., նույն է, ինչ որ ուրիշ տեղ հիշված Յուլ լեռը, որ է Տարոնի Տավրոս լեռը»: Տե՛ս Աբեղյան Մ., Հայոց հին գրականության պատմություն, գիրք առաջին (սկզբից մինչև X դարը), Երևան, 1944, էջ 407:

⁶ Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ստ., Բարսեղյան Հ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 4, Երևան, 1998, էջ 387, 416-417:

⁷ Տե՛ս Մանուչարյան Ա., Արագածոտնի նախարարական տները IV-VII դարերում // «ԲԵՇ. Հայագիտություն», 2017, թիվ 3, էջ 36, ծան. 4:

Եկեղեաց, Տարօն, Բզնունիք, Ծովիք, և որ ընդ մէջ նոցա և որ շուրջ գնքօք»¹: Պատմիչի հիշատակությունը չափազանցված է, քանի որ այդ գավառներից բոլորը չէ, որ պատկանում էին Գրիգոր Լուսավորչի տոհմին: Տարօնի գգալի մասը Մամիկոնյանների սեփականությունն էր, Այրարատը՝ Արշակունիներին, Եկեղյաց գավառի մեծ մասը՝ նույնպես արքայատոհմին: Հենց Փավստոս Բուզանդի տեղեկություններից գիտենք, որ Արշակունիներին էր պատկանում նաև Դարանաղի գավառի մեծ մասը: Գավառի Անի ամրոցում էին գտնվում թագավորների դամբարանները և արքունի գանձերի մի մասը², որը կողոպտվեց Շապուհ Բ-ի արշավանքներից մեկի ժամանակ: Ինչպես Հ. Մանանդյանն է նշում, «Գրիգոր Լուսավորչի տոհմն ունեցել է գյուղեր և կալվածքներ Հայաստանի գանազան մասերում, սակայն ենթադրել, որ հիշյալ 15 գավառները, այսինքն՝ Արշակունիների գրեթե ամբողջ «նստան»-ը, կաթողիկոսական տան կալվածքներն էին՝ այդ, անշուշտ չափազանցություն է»³:

Ինչպես վերը նշեցինք, կաթողիկոս Սահակ Պարթևն արու գավակ չունեք: Ելնելով այդ հանգամանքից՝ Հայոց կաթողիկոսը նախ պարսից արքունիքի առաջ միջնորդեց, որ իր տոհմի հետ խնամիական կապերով կապված Մամիկոնյան նախարարական տունը ստանա հինգերորդ գահը հայ նախարարների շարքում⁴: Նրանք ինչ հանգամանքներում էին շնորհագրկվել, այդ մասին տեղեկություններ չկան⁵: Եվ ապա մահվանից քիչ առաջ⁶ Գրիգոր Լուսավորչի տան հսկայական կալվածքները Սահակ կաթողիկոսը կտակեց իր թոռներին՝ Վարդանին, Հմայակին, Համազասպին⁷: Դրանով Մամիկոնյանները դարձան Հայաստանի մեծագույն հողատերերը, քանի որ Արշակունյաց թագավորությունն արդեն շուրջ մեկ տասնամյակ անկում էր

¹ Փավստոս Բուզանդ, էջ 178, 180:

² Տե՛ս նույն տեղում, էջ 222:

³ Մանանդյան Հ., Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Բ, Ա մաս, Երկեր, Երևան, 1978, էջ 398: Ս. Երեմյանը պատմիչի նկարագրությունը յուրովի է մեկնաբանում. «Բնագրում նշված են երկու կարգի գավառներ, Դարանաղի, Բզնունիք, Ծովիք գավառները... կազմում էին նրանց ժառանգական սեփականությունը, իսկ արքունի նստան հանդիսացող Այրարատում նրանց տրվել էին «ձեռական իշխանության» հողեր «մեծի դատաւարութեան» գործակալությունը գլխավորելու համար»: Տե՛ս **Երեմյան Ս.**, Պայմանական հողատիրության առաջացման հարցի շուրջ, էջ 7:

⁴ Տե՛ս **Адоиц Н.**, նշվ. աշխ., էջ 249: Ըստ Բ. Հարությունյանի՝ Գահնամակը ստեղծվել էր 388 թ.: Տե՛ս **Հարությունյան Բ.**, «Գահնամակի» թվագրման հարցի շուրջ // «ՊԲՀ», 1976, թիվ 2, էջ 74:

⁵ IV դարի սկզբից Մամիկոնյանները հայ նախարարների շարքում գրավել են հինգերորդ գահը. «Հինգերորդը Մամիկոնյանների նախարարը սպարապետը, որին էին ենթարկվում Հայոց ամբողջ հեծելազորն ու հետևակը...»: Տե՛ս Ազաթանգեղոսի պատմության հունական նորահայտ խմբագրությունը (Վարք), էջ 172:

⁶ Սահակ Պարթևը մահացել է 439 թ. նավասարդին: Տե՛ս **Կորյուն**, Վարք Մաշտոցի, բնագիրը, ձեռագրական ընթերցվածներով, թարգմանությամբ, ներածական ուսումնասիրությամբ, առաջաբանով և ծանոթագրություններով Մանուկ Աբեղյանի (այսուհետև՝ **Կորյուն**), Երևան, 1981, էջ 134, 136:

⁷ Տե՛ս **Ղազար Փարպեցի**, էջ 84:

ապրել, և Գրիգոր Լուսավորչի տան ժառանգությունը ստանալուց հետո նրանք արդեն իշխող էին Հայաստանի քաղաքական կյանքում:

Ինչպես ասվեց, այդ կալվածքները հսկայական էին և սփռված ամբողջ Հայաստանում: Դրանցից առաջինն Այրարատի Բագրևանդ գավառի կաթողիկոսական տիրույթներն էին, որոնք անցան Մամիկոնյաններին¹, և որոնց Բյուր գյուղում մահացավ Սահակ կաթողիկոսը: Բագրևանդ գավառը² մի քանի դար անընդհատ մնաց Մամիկոնյանների տիրապետության ներքո: Այդ մասին է վկայում այն հանգամանքը, որ երբ 850-ական թվականներին՝ հակաարաբական պայքարի շրջանում, ձերբակալվեց նաև Բագրևանդի տեր Գրիգոր Մամիկոնյանը³, նա, մի քանի տարի անցկացնելով արաբական գերության մեջ, վերադարձավ հայրենիք, սակայն կարճ ժամանակ անց մահացավ իր հայրենի Բագրևանդ գավառում: Ապագա Հայոց թագավոր Աշոտ Բագրատունին մահացած իշխանի գլուխը կտրեց և ուղարկեց արաբներին, ինչի դիմաց ստացավ Բագրևանդը: Վերջինիս հետ Բագրատունի իշխանը տիրեց նաև Գաբեղյանքին: Պատմիչի նկարագրությամբ Գրիգոր Մամիկոնյանը վերադարձից հետո «կամեր ամրանալ ի գաւառն Գաբեղինից ի Գագանածական»⁴: Այրարատի Գաբեղյանք գավառն Արշակունիների շրջանում եղել է համանուն նախարարական տան սեփականությունը⁵: Նրանց թուլացումից հետո գավառն աստիճանաբար անցավ հարևան Բագրևանդի Մամիկոնյաններին⁶, ապա Գրիգոր Մամիկոնյանի մահով Արշարունիքի և Մամիկոնյանների հինավուրց կալվածք Բագրևանդի միջև գտնվող Գաբեղյանքն անցավ Աշոտ Բագրատունուն⁷:

Ինչպես վերը նշել ենք, Տարոնի արևմտյան մասը՝ Աշտիշատ կենտրոնով, նույնպես կաթողիկոսական տան սեփականությունն էր⁸, և այնտեղ էր

¹ Տե՛ս **Toumanoff C.**, *Studies in Christian Caucasian History*, Georgetown University Press, 1963, p. 209:

² Բագրևանդը տարածվում էր Արածանիի վերնագավառում՝ Հայկական պարի, Ծաղկանց և Դիաղիսի լեռների միջև (տե՛ս **Հակոբյան Թ.**, նշվ. աշխ., էջ 134), և համապատասխանում էր այժմյան Ալաշկերտի հովտին (տե՛ս **Երեմյան Ս.**, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 42 և կից քարտեզը):

³ Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն**, Պատմություն տանն Արծրունեաց, բնագիրը հրատարակության պատրաստեց Վ. Մ. Վարդանյանը (այսուհետև՝ **Թովմա Արծրունի և Անանուն**), Երևան, 1985, էջ 296:

⁴ Տե՛ս **Վարդան վարդապետ**, էջ 81: Հմմտ. **Վարդանյան Ա.**, Մամիկոնյան իշխանական ընտանիքը Բագրևանդում և Տարոն-Մասունում IX-XII դդ., էջ 6:

⁵ Տե՛ս **Адоиц Н.**, նշվ. աշխ., էջ 250:

⁶ Ա. Եղիազարյանը գտնում է, որ Գաբեղյանքն ամբողջությամբ չի պատկանել Մամիկոնյաններին, այլ միայն դրա՝ Բագրևանդին հարող հատվածը: Տե՛ս **Եղիազարյան Ա.**, Հայ Բագրատունիների տերությունը (885-908 թթ.) (Պատմաաշխարհագրական ուսումնասիրություն), Երևան, 2011, էջ 92:

⁷ Տե՛ս **Դանիելյան Է. Լ.**, Թոռնիկյանների քաղաքական դերը X դ. հայ-բյուզանդական հարաբերություններում // «ԼՀԳ», 1977, թիվ 10, էջ 65, ծան. 10:

⁸ Տե՛ս **Փավստոս Բուզանդ**, էջ 178, 180:

գտնվում Գրիգոր Լուսավորչի տան հանգստարանը¹, որը ևս 439 թ. հետո անցավ Մամիկոնյան իշխաններին:

Հաջորդը Բարձր Հայքի Եկեղյաց գավառն էր, որն այժմյան Երզնկայի տարածաշրջանում է²: Գավառի մի մասն Արշակունիների շրջանում եղել է Գրիգոր Լուսավորչի տոհմի սեփականությունը, որը նրանք հավանաբար ստացել են Տրդատ Գ-ի նվիրաբերած բազմաթիվ կալվածքների թվում: Սկզբնաղբյուրները փաստում են, որ ամբողջ գավառը չէր պատկանում կաթողիկոսական տանը: Փավստոս Բուզանդը, նկարագրելով Պապ թագավորի և Ներսես կաթողիկոսի հայտնի ճաշկերույթը, նշում է, որ թագավորը քահանայապետին հրավիրեց «յապարանս իւր ի Խախ աւանի յԵկեղեաց գաւառի»³: Սա ևս մեկ անգամ ժխտում է պատմիչի և մի շարք ուսումնասիրողների այն տեսակետը, որ իբրև թե 15 գավառներն ամբողջությամբ պատկանում էին Գրիգոր Լուսավորչի ընտանիքին: Ինչպես նշում է Ն. Ադոնցը, «այդ գավառներում իշխանական կալվածքների կողքին կային նաև եկեղեցական, կամ ավելի ճիշտ՝ հոգևոր կալվածքներ»⁴: Եկեղյաց գավառն իր Չրմես կենտրոնով Հայաստանի 387 թ. բաժանումից հետո կարճ ժամանակով դարձավ նաև Արշակ Գ-ի նստավայրը, որտեղ նա կնքեց իր մահկանացուն⁵: Արշակունյաց թագավորության անկումով և Սահակ կաթողիկոսի մահով գավառի մեծագույն մասն անցավ Մամիկոնյաններին: Եկեղյաց գավառը V դարում գտնվում էր Մամիկոնյան մեկ այլ ճյուղի տիրապետության ներքո: Մասնավորապես 450-451 թթ. ապստամբության շրջանում կայսրությանն անցած Հայաստանի սպարապետն էր Վասակ Մամիկոնյանը: Այս առումով Եղիշեն նշում է. «Վասակ անուն էր, յայնց Մամիկոնենից՝ որ կան ի ծառայութեան Յունաց: ... այրն այն սպարապետ էր Ստորին Հայոց»⁶: Հուստինիանոս կայսեր օրոք և հետագա ժամանակաշրջանում ևս Մամիկոնյանները ունեին իրենց կալվածքները բյուզանդական Հայաստանում և զբաղեցնում էին կարևորագույն պաշտոններ⁷:

¹ Տե՛ս **Կորյուն**, էջ 136:

² Եկեղյաց գավառի աշխարհագրական մանրամասն նկարագրությունը տե՛ս **Երեմյան Ս.**, նշվ. աշխ., էջ 50 և կից քարտեզը, **Հակոբյան Թ.**, նշվ. աշխ., էջ 223-224, **Հարությունյան Բ.**, Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 66-68 և կից քարտեզը:

³ **Փավստոս Բուզանդ**, էջ 330: Եկեղյաց գավառի Թիլ ավանում է թաղվել Ներսես կաթողիկոսը (տե՛ս նույն տեղում, էջ 334, **Մովսես Խորենացի**, էջ 306):

⁴ **Աժոնի Հ.**, նշվ. աշխ., էջ 125:

⁵ Տե՛ս **Մովսես Խորենացի**, էջ 316:

⁶ **Եղիշեն**, էջ 93:

⁷ Տե՛ս **Աժոնի Հ.**, նշվ. աշխ., էջ 125-126: Ա. Տեր-Ղևոնդյանը Մամիկոնյանների կալվածքների շարքում է հիշատակում է նաև Աղբիանոսի տան և Մանդակունիների հողերը (տե՛ս **Տեր-Ղևոնդյան Ա.**, Հայաստանը արաբական խալիֆայության տիրապետության ներքո // Հայ ժողովրդի պատմություն, հ. II, Երևան, 1984, էջ 321), սակայն չի նշում, թե այդ հողերին Մամիկոնյանները երբ են սկսել տիրապետել:

Բացի Արշակունիներին մատուցած ծառայություններից և Սահակ Պարթևի կտակով ստացած տիրույթներից, Մամիկոնյանները կալվածքներ ձեռք բերեցին նաև հետագա դարերում, որոնցից էր VII դարում «Աշխարհացոյց»-ում հիշատակված Աղձնիքի «Սանասուն»¹ կամ Սասուն գավառը: Թե երբ են հաստատվել Մամիկոնյանները Սասունում, ստույգ հայտնի չէ: VII դարի հեղինակ Հովհան Մամիկոնյանը VI դարի վերջին իր գործունեությամբ աչքի ընկած Մուշեղ Մամիկոնյանին համարում է «գտերն Մշոյ և Խութայ, Տարօնոյ իշխանն և Սասնոյ»²: Այսինքն՝ նրանք իրենց վաղեմի կալվածք Տարոնի հարևան Սասունին տիրել են ավելի վաղ: Երբ 774-775 թթ. համաժողովրդական ապստամբության պարտությունից հետո, մասնավորապես IX դարի առաջին տասնամյակում Բագրատունիները տիրեցին Մամիկոնյանների կալվածքների զգալի մասին, ինչպես վերը նշել ենք, այդ թվում՝ Տարոնին, ժամանակավորապես նրանց շառավիղներն իրենց գործունեությունը շարունակեցին Սասունի լեռնային շրջաններում: Սասունի³ Մամիկոնյան իշխանությունը կարճ ժամանակում վերելք ապրեց, և նրանք սկսեցին կամաց-կամաց ընդարձակել իրենց իշխանության սահմանները: Դա կապված էր նաև Բյուզանդական կայսրության առաջխախացման հետ: 968 թ. Բյուզանդիայի կողմից Տարոնի մեծ մասի գրավումով⁴ այնտեղ վերացավ Բագրատունիների իշխանությունը: Եվ այդ ճանապարհին գավառում սկսում են ակտիվանալ Մամիկոնյանների շառավիղները՝ Թոռնիկյաններ անվանումով, իշխելով Տարոնի արևելյան մասի վրա⁵: Նպատակ չունենալով քննել Մամիկոնյան-Թոռնիկյան իշխանական ընտանիքի ամբողջ գործունեությունը, ինչը մեր աշխատանքի շրջանակներից դուրս է, մանավանդ դրան անդրադարձել են մի շարք հեղինակներ⁶, նշենք, որ ժամանակի

¹ «Աշխարհացոյց» Մովսես Խորենացույ յաւելուածովք նախնեաց (այսուհետև՝ «Աշխարհացոյց»), Վենետիկ, 1881, էջ 31:

² **Հովհան Մամիկոնյան**, էջ 158-ի ծան., **Գրիգորյան Գ.**, նշվ. աշխ., էջ 28-29:

³ Արաբական տիրապետության սկզբնական շրջանում Սասունը նախ մաս է կազմում Ջազիրա, ապա՝ VII դարի երկրորդ կեսից Արմինիա ոստիկանությանը: Տե՛ս **Շիխազարյան Ա.**, Արաբական խալիֆայության Արմինիա վարչական շրջանը, Երևան, 2010, էջ 79 և կից քարտեզը:

⁴ Տարոնը բյուզանդացիների կողմից գրավելու թվականի վերաբերյալ տե՛ս **Գրիգորյան Գ.**, նշվ. աշխ., էջ 146-148, 155:

⁵ Տե՛ս **Դանիելյան Է. Լ.**, Թոռնիկյանների քաղաքական դերը X դ. հայ-բյուզանդական հարաբերություններում, էջ 66-67:

⁶ Տե՛ս **Ադոնց Ն.**, Տարոնացիները Հայաստանում և Բյուզանդիայում // **Ադոնց Ն.**, Երկեր, «Հայ-բյուզանդական ուսումնասիրություններ», հ. Ե, Երևան, 2012, էջ 260-324, **Ակիմեան Ն.**, Թոռնիկեանց ճիւղագրութիւնը, Մատենագրական հետազոտութիւններ, հ. Գ, Վիեննա, 1938, էջ 49-88: **Պետոյան Վ.**, Սասունի Թոռնիկյան իշխանությունը // «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1955, թիվ 2, էջ 85-96, *նույնի՝* Սասուն, Երևան, 2016, էջ 107-133, **Каждан А.**, Армяне в составе господствующего класса Византийской империи в IX-XII вв., Ереван, 1975, с. 47-57, **Տեր-Ղևոնդյան Ա.**, Սասունի Թոռնիկյանները // Հայ ժողովրդի պատմություն, հ. III, Երևան, 1976, էջ 483-487, **Դա-**

ընթացքում Մամիկոնյան-Թոռնիկյան իշխանությունը դարձավ հայկական ամենահզոր իշխանություններից մեկը: Սակայն պետք է արձանագրել, որ այդ ժամանակ ո՛չ Հայաստանում իրենց գոյությունը շարունակող պետական միավորումները և ո՛չ էլ հարավ-արևմուտքում գտնվող Տարոն-Մասունի իշխանությունը Բյուզանդիայի ազդեցիվ քաղաքականության, ինչպես նաև սելջուկների օրեցօր ահագնացող ուժի պատճառով չկարողացան դառնալ համահայկական միավորումներ, ինչը հետագայում կանխորոշեց նրանց ճակատագիրը: Այդ իշխանությունները ժամանակի ընթացքում դադարեցին գոյություն ունենալուց: Մասունի Մամիկոնյան տերերը երկարատև պայքարից հետո՝ 1184-1185 թթ.¹, գաղթեցին Կիլիկիա²:

Ինչպես վերը տեսանք, ըստ Հովհան Մամիկոնյանի տեղեկության³՝ Մուշեղ Մամիկոնյանի տիրապետության տակ էր նաև Տուրուբերանի առաջին գավառ Խոյթը⁴ կամ Խույթը: Մամիկոնյանների հնամենի կալվածք Տարոնից հարավ-արևելք գտնվող Խույթը թե երբ էր դարձել նրանց տիրույթ, հնարավոր չէ ճշգրտել սկզբնաղբյուրներում տեղեկությունների բացակայության պատճառով: Թ. Հակոբյանն առանց նշելու սկզբնաղբյուրը գրում է. «Այստեղ միջև IV դարի երկրորդ կեսն իշխում էին տեղական իշխանները: IV դարի երկրորդ կեսից Խույթը միացված էր Տարոնի Մամիկոնյանների իշխանությանը»⁵: Թե ինչ հանգամանքներում տեղական իշխանական տոհմը վերացավ, հեղինակը չի պարզաբանում: Հնարավոր է, որ գավառը Մամիկոնյաններին է անցել 387 թ. Հայաստանի առաջին բաժանման ժամանակ, քանի

նիկոնյան Է. Լ., Թոռնիկյանների քաղաքական դերը X դ. հայ-բյուզանդական հարաբերություններում, էջ 64-72, *նույնի՝* Տարոնը հայ-բյուզանդական հարաբերություններում (IX դարի երկրորդ կես-X դար) // «ՊԲՀ», 1978, թիվ 1, էջ 125-140, *նույնի՝* Տարոնի և Մասունի Մամիկոնյաններ-Թոռնիկյանները (XI-XII դդ.) // «ՊԲՀ», 1979, թիվ 2, էջ 137-153, **Юзбашян К.**, Армянские государства эпохе Багратидов и Византии IX-XI вв., М., 1988, с. 117-124, 175-178, **Степаненко В.**, Чортванели, Торники и Тарониты в Византии // Античная древность и средние века, Екатеринбург, 1999, вып. 30, с. 130-147, **Վարդանյան Ա.**, Մամիկոնյան իշխանական ընտանիքը Բագրևանդում և Տարոն-Մասունում IX-XII դդ., էջ 3-16 և ուրիշներ:

¹ Խլաթի ամիրայի և Մասունի տերերի միջև պայքարի մասին տե՛ս Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, Արաբական աղբյուրներ, Բ, Իբն Ալ-Ասիր, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Արամ Տեր-Ղևոնդյանի (այսուհետև՝ **Իբն Ալ-Ասիր**), Երևան, 1981, էջ 212: Կ. Թումանովը Մամիկոնյան իշխանների՝ Կիլիկիա գաղթի տարի է նշում 1189/1190 թվականները: Տե՛ս **Toumanoff C.**, նշվ., աշխ., էջ 210:

² Կիլիկիայում Հեթում և Շահնշահ Մամիկոնյանների գործունեության մասին տե՛ս **Ադոնց Ն.**, Տարոնացիները Հայաստանում և Բյուզանդիայում, էջ 297-298, **Տեր-Պետրոսյան Լ.**, Խաչակիրները և հայերը, պատմա-քաղաքագիտական հետազոտություն, հ. Բ, Երևան, 2007, էջ 177-178:

³ Տե՛ս **Յովհան Մամիկոնեան**, էջ 158-ի ծան.:

⁴ «Աշխարհացոյց», էջ 31: Խույթ գավառի աշխարհագրական նկարագրությունը տե՛ս **Հարությունյան Բ.**, Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 222-224 և կից քարտերը:

⁵ **Հակոբյան Թ.**, նշվ. աշխ., էջ 165:

որ մի շարք նախարարներ Արշակ Գ-ի մահից հետո հեռացան Արևելահայկական թագավորություն՝ Խոսրով IV-ի տիրապետության տակ, և Տուրուբերան նահանգի խոշոր կալվածատերեր Մամիկոնյանները ձեռք բերեցին Խուրի փոքր գավառը¹: Արաբական տիրապետության շրջանում Խուրը և հարակից գավառները IX դարի սկզբներին Մամիկոնյանների թուլացման և ժամանակավորապես քաղաքական ասպարեզից հեռացման հետևանքով անցան այլ նախարարական տներին²:

Հաջորդ կալվածքները, որոնց տիրացան Մամիկոնյանները, նույնպես Արագածոտն գավառում էին: 661 թ. հայոց իշխան է դառնում Գրիգոր Մամիկոնյանը³: Չանրադառնալով Մամիկոնյան իշխանի շինարարական գործունեությանը⁴ նշենք, որ նա հաստատվել էր Արագածոտնի Արուճ ավանում՝ վերջինս դարձնելով Հայաստանի քաղաքական կենտրոնը, այնտեղ կառուցելով ապարանք և եկեղեցի⁵: Դրանք հաստատապես վկայում են Մամիկոնյանների կալվածքների մասին Արագածոտնում: Սկզբնաղբյուրների սակավության պատճառով հնարավոր չէ պարզել, թե Մամիկոնյանները որ թվականին էին ձեռք բերել Արուճը և շրջակայքը: Ինչպես հայտնի է, Այրարատը, այդ թվում՝ Արագածոտնը պատկանել են Արշակունիներին: 428 թ.՝ թագավորության վերացումից հետո, այնտեղ հանդես եկան մի շարք նախարարական տներ⁶: Դրանից անմասն չէին կարող մնալ Հայաստանի քաղաքական կյանքում արդեն մեծ դեր խաղացող Մամիկոնյանները, որոնք, ինչպես գիտենք, դրանից հարյուր տարի առաջ Արագածոտնում ունեին իրենց սեփական կալվածքները (Յլու գլուխը, Ջանջանակը, Ջրաբաշխը), և բնական է՝ պետք է ընդարձակեին իրենց տիրությունները՝ ամուր հաստատվելով Հայաստանի կենտրոնական շրջաններում և առաջիկայում ավելի ընդարձակելով այն⁷: Կարծում ենք, որ V դարի 50-ական թվականներին Արագածոտնի մեծ

¹ Ս. Երեմյանը Խուրի տարածքը հաշվում է շուրջ 1190 կմ² (տե՛ս **Երեմյան Ս.**, նշվ. աշխ., էջ 55 և կից քարտեզը, Ձ6):

² Խուրեցիները Հովհանի գլխավորությամբ 851-852 թթ. ձմռանը կոտորեցին Հայաստան ներխուժած և Մուշում ապաստանած արաբ զորավար Յուսուֆի հրոսակներին (տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 190, **Իբն Ալ-Ասիր**, էջ 157-158):

³ Տե՛ս **Ղևոնդ**, էջ 14, **Յովաննու կաթողիկոսի Դրասխանակերտցոյ**, Պատմութիւն Հայոց (այսուհետև՝ **Հովհաննես Դրասխանակերտցի**), Երևան, 1996, էջ 92: Հմմտ. **Տեր-Ղևոնդյան Ա.**, «Հայոց իշխանը»-ը արաբական տիրապետության ժամանակաշրջանում // **Տեր-Ղևոնդյան Ա.**, Հողվածների ժողովածու, Երևան, 2003, էջ 92-93:

⁴ Այդ մասին մանրամասն տե՛ս **Մաթևոսյան Կ.**, Արուճ, Երևան, 1987, էջ 16-26, **Վարդանյան Ա.**, Հայոց անկախ իշխանությունը Համագասպ և Գրիգոր Մամիկոնյանների օրոք // «Հայագիտության հարցեր» (այսուհետև՝ «ՀՀ»), 2018, թիվ 1, էջ 11-23:

⁵ Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 94: Հմմտ. **Մաթևոսյան Կ.**, նշվ. աշխ., էջ 10-16:

⁶ Տե՛ս **Адоиц Н.**, նշվ. աշխ., էջ 302-303:

⁷ Հնարավոր է, որ Արագածոտնի կենտրոնական շրջանները Արուճ գյուղաքաղաքով Մամիկոնյանները ստացան Սահակ Պարթևի կտակով, քանի որ Փավստոս Բուզանդը նշում

մասն արդեն պատկանում էր Մամիկոնյաններին: Անդրադառնալով 450 թ. աշնանը Հայաստանում ծավալված իրադարձություններին՝ Եղիշեն նշում է, որ Վասակ Սյունին «աւերեալ գրագում տեղիս Հայոց աշխարհին, մանաւանդ զձմերոցա արքունի, որ կայանք զօրացն էին... զԱրուճն, զԱշնակն և զամենայն ուրն Արագածու»¹: Մարգարանը ոչ միայն ոչնչացնում էր հայկական բանակի ձմեռանոցները և սննդի պաշարները, այլև իրեն հակառակորդ նախարարների տիրույթները, այդ թվում՝ առաջին հերթին ապստամբությունը ղեկավարող Մամիկոնյանների արագածոտնյան կալվածքները: Հետագայում նրանք ավելի ընդարձակեցին իրենց տիրույթները՝ Գրիգոր Մամիկոնյանի իշխանության տակ վերցնելով նաև Այրարատի Եղվարդ գավառակը, որտեղ VII դարի 70-ական թվականներին նա կառուցում է Ս. Ջորավոր եկեղեցին², ինչպես նաև՝ Կոտայքի որոշ մասեր, որի Չագ գյուղը հայոց իշխանը նվիրում է պարսիկ Սուրհանին, որը քրիստոնյա մկրտվելուց հետո ստացել էր Դավիթ անունը³:

Արագածոտնի մեծագույն մասը Մամիկոնյանների տիրապետության տակ մնաց մինչև IX դարի սկիզբը: Հետագայում այն անցավ Բագրատունիներին, ապա՝ Ջաքարյաններին:

Հաջորդը Տուրուբերանի Բզնունիք գավառն էր⁴, որը VII դարում գտնվում էր Մամիկոնյանների տիրապետության ներքո: Հայտնի է, որ դավաճանության հետևանքով Խոսրով Կոտակի օրոք Վաչե Մամիկոնյանը կոտորեց Բզնունյաց նախարարական տոհմը, որի առնչությամբ Փավստոս Բուզանդը նշում է. «Ձտուն նոցա յարքունիս կալան»⁵: Սակայն մեկ այլ առիթով նա եկեղեցու սեփականություն 15 գավառների շարքում հիշատակում է Բզնունիքը⁶: Այստեղ հակասությունն ակնհայտ է: Չէր կարող ամբողջ գավառը պատկանել եկեղեցուն որպես սեփականություն և միաժամանակ լինել Բզնունյաց

է, որ եկեղեցին սեփական կալվածքներ ուներ Այրարատում (տե՛ս **Փավստոս Բուզանդ**, էջ 178):

¹ Եղիշեն, էջ 78-79:

² **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 94: Հմմտ. **Մաթևոսյան Կ.**, նշվ., աշխ., էջ 51:

³ Նույն տեղում: Բացի բազմաթիվ գավառներից, Մամիկոնյաններին էր պատկանում նաև առանձին մի շարք գյուղեր: Ղազար Փարպեցին, խոսելով պարսիկների և Վահան Մամիկոնյանի բախումների մասին, նշում է, որ հայոց զորավարը, «բանակեր ի գիւղ մի մերձ, որ էր ընդ իշխանութեամբն Մամիկոնեից, որում անուն էր Ծաղիկ» (տե՛ս **Ղազար Փարպեցի**, էջ 360): Ծաղիկ գյուղը գտնվում էր բյուզանդա-պարսկական սահմանագլխին՝ Կանդիլ լեռան մոտերքում (տե՛ս **Աժոնի Հ.**, նշվ. աշխ., էջ 23-24, **Հակոբյան Թ.**, նշվ. աշխ., էջ 104):

⁴ Բզնունիք գավառի աշխարհագրական դիրքի մասին տե՛ս **Հարությունյան Բ.**, Մեծ Հայքի վարչա-քաղաքական համակարգն ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 235-237 և կից քարտեզը:

⁵ Տե՛ս **Փավստոս Բուզանդ**, էջ 34: Ս. Երեմյանը նշում է, որ թագավորը Բզնունիք գավառը շնորհում է Աղբիանոս եպիսկոպոսին (տե՛ս **Երեմյան Ս.**, Հայաստանի քաղաքական վիճակը Տրդատ Գ-ի հաջորդների ժամանակ // Հայ ժողովրդի պատմություն, հ. II, էջ 89):

⁶ Տե՛ս **Փավստոս Բուզանդ**, էջ 180: Ն. Արոնցը նշում է, որ արքունիքը նախ գրավել է Բզնունիքը, ապա այն անցել է Բզնունյաց եպիսկոպոսին (տե՛ս **Աժոնի Հ.**, նշվ. աշխ., 312-313):

նախարարի իշխանության ներքո: Հավանական է, որ Բզնունյաց գավառում եկեղեցին ուներ իր որոշ կալվածքները, որոնց, ինչպես հաղորդում է Փավստոս Բուզանդը, տիրապետել է մինչև Մահակ Պարթևի մահը՝ 439 թ.: Իսկ արքունի բաժինն անձեռնմխելի մնաց մինչև 428 թ.: Թագավորության անկումով և կաթողիկոսի կտակով հավանաբար գավառն ամբողջությամբ անցավ Մամիկոնյաններին, այլ ոչ թե Համազասպ Մամիկոնյանը Բզնունիքին տիրեց Թեոդորոս Ռշտունու մահից հետո¹:

Մյուսն Այրարատ նահանգի Արշարունիք գավառն է: Ինչպես հայտնի է, այն պատկանել է Կամսարականներին, սակայն պատմիչների կցկտուր հաղորդումներից տեղեկանում ենք, որ Արշարունիքի մի մասն Արտագերս ամբողջով պատկանում էր Մամիկոնյաններին: Ղևոնդը 774-775 թթ. ապստամբությանն անդրադառնալիս նշում է, որ Մուշեղ Մամիկոնյանն ամրացել էր Արտագերս ամբողջում²: Իսկ Վարդան պատմիչը, նկարագրելով հետագա իրադարձությունները, այն է՝ Մուշեղ Մամիկոնյանի դստեր հետ ամուսնացած Ջահապի հավանականությունները Մամիկոնյանների տիրույթների նկատմամբ, նշում է. «Ջահապ յափշտակեալ իր մասն ինչ յԱրշարունեաց, և խորհէր տիրել ի ձեռն կնոջն բոլոր աշխարհին»³: Պատմիչների այս հաղորդումները հետագա ուսումնասիրողներին⁴ հիմք են տվել փաստելու, որ Արշարունիքի մի մասը VIII դարի երկրորդ կեսին պատկանել է Մամիկոնյաններին: Թե Արտագերս ամբողջը և շրջակայքը նրանք երբ էին ձեռք բերել իրենց հետ միշտ բարիդրացիական հարաբերությունների մեջ գտնվող Կամսարականներից, հնարավոր չէ պարզել սկզբնաղբյուրներում տեղեկությունների բացակայության պատճառով: Արշարունիքի Մամիկոնյան կալվածքներում Ջահապի տիրապետությունը կարճ տևեց: Հայոց իշխան Աշոտ Բագրատունին, որը ձեռնամուխ էր եղել հայկական հողերի միավորմանը, պարտության մատնեց Ջահապին և 810-813 թթ. միջակայքում տիրացավ ամբողջ Արշարունիք գավառին⁵:

¹ Տե՛ս **Toumanoff C.**, նշվ., աշխ., էջ 213:

² Տե՛ս **Ղևոնդ**, էջ 139:

³ **Վարդան վարդապետ**, էջ 76:

⁴ Ուսումնասիրողների գերակշիռ մասն Արշարունիքի մի հատվածը՝ Արտագերս ամբողջով, համարում է Մամիկոնյանների սեփականությունը (տե՛ս **Ադոնց Ն.**, Բագրատունյաց փառքը // **Ադոնց Ն.**, Երկեր, հ. Ա, Երևան, 2006, էջ 448, **Գրիգորյան Գ.**, նշվ. աշխ., էջ 51-52, **Եղիազարյան Ա.**, Արաբական խալիֆայության Արմինիա վարչական շրջանը, էջ 158-159, ծան. 7, **Վարդանյան Ա.**, Տարոն գավառի պատկանելիության հարցի շուրջ (VIII դ. երկրորդ կես-IX դ. սկիզբ), էջ 48, 50 և ուրիշներ): Հարցի վերաբերյալ այլ տեսակետ ունի Մ. Գրիգորյանը. համարելով, որ Ջահապի հետ ամուսնացած հայ օրիորդը ոչ թե Մամիկոնյան տոհմից էր, այլ Աշոտ Մսակեր Բագրատունու քույրը՝ Արուսյակ Բագրատունին էր (տե՛ս **Գրիգորյան Մ.**, IX դարասկզբի Արշարունիքի տերերի հարցի շուրջ // «ԲԵՀ», 2011, թիվ 1, էջ 29), նա հանգում է այն եզրակացության, որ Կամսարականների քաղաքական ասպարեզից հեռանալուց հետո Արշարունիքին տիրապետել են Բագրատունիները (տե՛ս նույն տեղում, էջ 31):

⁵ Տե՛ս **Վարդանյան Ա.**, նշվ. աշխ., էջ 50:

Այսպիսով, IV դարի սկզբներին Հայաստանում ձեռք բերելով իրենց առաջին տիրույթները, Մամիկոնյանները երկու-երեք հարուրամյակի ընթացքում թե՛ երկրին մատուցած ծառայությունների դիմաց, թե՛ ինամիական կապերի շնորհիվ դարձան Հայաստանի ամենամեծ ավատատերերը և հայոց պետականության բացակայության պայմաններում, տարբեր դարերում գլխավորեցին օտար տիրապետության դեմ համաժողովրդական պայքարը և մասնավորապես 774-775 թթ. հակաարաբական ապստամբությունը, որը խալիլեց Հայաստանում խալիֆայության տիրապետության հիմքերը և հետագայում նպաստեց հայկական պետականության վերականգնմանը:

Արցիտի Վարդանյան – *Владения нахарарского дома Мамиконянов*

В 240-ых годах Мамиконяны переселились в Армению, в 320-ых годах в результате истребления нахарарами Слкуня они получили свои первые владения – восточную часть области Тарон. Через некоторое время они завладели и Тайком. Закрепившись в рядах армянских нахараров, Мамиконяны не сразу, в течение двух веков, стали крупными землевладельцами Армении. После 439 г. к ним перешло огромное церковное поместье Багреванд, восточная часть Тарона – центр Аштишата, большая часть провинции Екегяц. Вскоре они приобрели значительную часть Арагацотна, Палуник, Сасун, Хут, провинцию Бзунянц, часть Аршаруника с крепостью Артагес.

Argishti Vardanyan – *Mamikonyan Ministerial House Domains*

In 240 the Mamikonyans migrated to Armenia. In 320 due to the destruction of Slkuni ministerial house, they got their first domination in the eastern part of Taron. Later they obtained Tayk as well. Recruiting in the rows of Armenian ministers during less than two centuries the Mamikonyans became the greatest landholders of Armenia, both for the services that they provided for the Arshakuni kings and also thanks to their kinship ties. After 439, they took possession of such vast areas as Bagrevand, the eastern part of Taron with the center of Ashtishat, the great part of Ekeghyac province, the great part of Arsharunik with the castle of Artagers. These were not all the domains of the Mamikonyans, spread all over Armenia.

Ներկայացվել է 23.01.2019

Գրախոսվել է 31.01.2019

Ընդունվել է տպագրության 21.02.2019